



66 (250). ԽԵԼՈՔ ՀԱՐՍ

Ուր կարողութեն ցփնող կեսրեր կը տեսնա, օր հարս յըմնօր
զտան տախտ կավլե, դժեխ կը տանե թափե ծովն ու գիկա:

— Հա՛րս, լա՛ն,— կըսե կեսրեր,— դժեխ տան փողոցն չորի՞ն
չը թափիս, կը տանիս իգա խզեր հեռու՝ ծով գըլնաս:

— Միտք ունիմ զծով ցամքըցում:

— Հա՛րս, ծովն ըսկի տան ժեխով կը ցամքի՞, դխելքդի թոցու-
ցե՞ր իս:

Հարս կըսե.

— Իմալ օր տան ժեխով ծով չը ցամքի, էն հմալ լե քու ճակտի
քրտնքով, քու դառ-դատումով չըս կոնա զալըմի՝ աղի ու ռեկի. մի՞ր՝
ու մոտըսի՞² բոկ կշտացու:

Կեսրեր դլխի դընկնա, օր հարս խելք բան կըսե, էդ օրվրեն
չը ցփնե ուր կարողութեն:

¹ Ամիր (Իշխան) բառի կրճատ ձևը (Մ. Բ.):

² Մոտրսլ (մտրրր) — գնլու (Մ. Բ.):

